

## Տարեկան փաստացի տոկոսադրույթի հաշվարկի բանաձև

Տարեկան փաստացի տոկոսադրույթի չափը կախված է վարկի պայմաններից՝ վարկի գումար, ժամկետ, վարկի մարմանն ուղղված վճարների գումար և մարումների քանակ:

Տարեկան փաստացի տոկոսադրույթը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

$i$  – տարեկան փաստացի տոկոսադրույթն է, որը սպառողի վարկավորման ընդհանուր ծախսն է, արտահայտված տրամադրված վարկի տարեկան տոկոսով, և որն իր մեջ պարունակում է բոլոր տոկոսներն ու այլ վճարումները, որոնք սպառողը պարտավոր է վճարել վարկի ստացման, ինչպես նաև դրա գործողության ողջ ընթացքում:

$A$  – սպառողին տրամադրվող վարկի սկզբնական գումարն է:

$n$  – սպառողի կողմից վարկի մարմանն ուղղված (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) վճարի (ներառյալ վարկի ստացման պահին կատարվող վճարի) հերթական համարն է: Ընդ որում,

մեկ օրվա ընթացքում վարկի մայր գումարի, տոկոսագումարների և(կամ) այլ վճարումների կատարումը համարվում է մեկ վճարում:

**N** - վարկի մարմանն (վարկի մայր գումար, տոկոսագումարներ և(կամ) այլ վճարումների գումարներ) ուղղված վերջին վճարի համարն է՝ ներառյալ նաև վարկի ստացման պահին կատարվող վճարը, որից հետո սպառողի կողմից վարկային պայմանագրով ստանձնած պարտավորությունները համարվում են մարված:

**Kn** - սպառողի կողմից վարկի ստացման պահին և(կամ) վարկի գործողության ընթացքում կատարված հերթական՝ *n*-րդ վճարի գումարն է (մայր գումար, տոկոսագումարներ և (կամ) այլ վճարումների գումարներ):

**Dn** – այն թիվն է, որը ցույց է տալիս, թե քանի օր է անցել վարկի ստացման օրից մինչև վարկի գումարի հերթական՝ *n*-րդ մարման օրը ներառյալ: